զի այն Կամենիցը չէր տեսածը, ինչ որ կ'երեւակայէր՝ լսելով երբեմն Բուտագովչի մեծաբան գովեստները։ Միայն բերդը՝ հասարակաց շինուածոց մէջ, բարեկարգ գտաւ. զի այլազգիք զայն նորոգելով, քանի մի ամրոյք ևս աւելցուցած էին. Մնացեալ ամենայն ինչ աւերակի, դերբուկի երեւոյթ ունէր։ Տասն և վեց տարուան միջոց անխնամ սալայատակք շատ տեղ աւրուած էին, չէն ու բազմամարդ քաղաքն ամայի և անմարդի կ'երևար. Լեհաց կոչուած հրապարակին կեդրոնը՝ անհեղեղ Կարաւան-Սարայ մի բարձրացած էր. քրիստոնէից չորս փառաւոր եկեղեցիքն 'ի մզկիթ փոխուած, որոց սեւացեալ և ծեփաթափ որմունքն տխրագին տեսիլ կ'ընծայէին. նոցա գաւթաց մէջ կը վխտային խոցոտ և բորոտեալ տնանկներ։ Ֆրանկիսկեանց վանքի երկղեցին, (որ այժմ եպիսկոպոսական եկեղեցի է Ռուսաց), Նոյնպէս Ս. Կատարինէ եկեղեցին, զինուորական կահուց ամբարանոց եղած էին, Յիսուսեանց հոյակապ վանքն ախոռ դարձած, ուր քանի չափ նիհար ուղտեր և քանի մի վատոյժ ձիեր կապուած։ Հայոց Աւետման և Ս. Նիկոլայ փառաւոր եկեղեցին, աներդիք, անդուռն և անպատուհան բուոց և ղղկանց բոյն դարձած. պատերուն վրայ և գաւթաց մէջ՝ եղիճ և այլ մոլախոտեր բուսած. միւս երկու փայտաշէն եկեղեցիքն, մին մեծ՝ Վերափոխման Կուսին, հանդիպակաց Ս. Նիկոլայ եկեղեցւոյն, Հայոց հրապարակին արևմտեան ծայրը, միւսը Ս. Ստեփանոսի, որ այժմեան Հայոց զանգակատան տեղը կը կարծուի, երկուքն ևս կրակի ճարակ եղած, տեղերնին, հետքերնին անգամ յայտնի չէր։

Ակոռսոյի նշանակուած էր՝ ոչ ազգիս փառաց,